Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3394

1923

ЗКСМ
П--54

Ռեֆերատ
1923

9.1
Կ-21

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք։

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 9.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Կոմմունիստական երիտասարդական Ինտերնացիոնալի սեկցիա.)

ЗКСМ
Ռ-54

Թ ի ֆ լ ի ս

Ա-րդ Տպարան Ժող. Տնտ. Գեր. Խորհրդի, Պուշկ. փ. № 3.

1923

3КСМ
Ռ-54

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Կոմմունիստական երիտասարդական ինտերնացիոնալի սեկցիա.)

Ն 2001
1006

Թ ի ֆ լ ի ս

Տպ. Գեր. Խորհրդի, Գուչկ. փ. № 3.
1923

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան
6915-57

10829 ик

Հրատարակութիւն Ռ. Կ. Ե. Մ. անդրկովկասի երկրային կոմիտեի.

Ա. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՒ ՀԵՌԱՑՆԵԼԸ.

1. Ռուսաստանի Կոմունիստական Երիտասարդական Միութեան անդամ համարվում են այն բոլոր 14-ից մինչև 23 տարեկան երիտասարդները, վորոնք ընդունում են միութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը, աշխատում են նրա վորևէ կազմակերպութեան մէջ—ենթարկվելով Միութեան բոլոր վորոշումներին և վճարելով անդամավճարները:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. 23 տարեկան հասակ ունեցող անդամները, միութեան մէջ կարող են մնալ վորպէս պասիվ անդամներ (ունենալ խորհրդակցական ձայն տալու իրավունք): Եթէ պասսիվ անդամն ընտրվում է վորևէ ձեռնարկող կազմակերպութեան անդամ, նրան նորից տրվում է վճռական ձայն ունենալու իրավունքը:

2. Ռ. Կ. Ե. Մ. անդամներ և թեկնածուներ ընդունելու կարգն այսպէս է՛. ա) Միութեան անդամներ ընտրվում են բանվոր-գիւղացիական երիտասարդութեան առանց երաշխավորութեան և կանդիդատական ստաժի:

բ) Միութեան թեկնածուներ ընդունվում են վոչ պրոլետարական ծագում ունեցող ուսանողները, և ծառայողները:

գ) Թեկնածուների համար վորոշվում է մեկ տարվա կանդիդատական ստաժ:

դ) Կանդիտատներն ընդունվում են կոմկուսի, և կամ կոմերիտի երկու անդամների երաշխավորությամբ; Երաշխավորողները ունենալու են առնվազն երկու տարվա ստաժ։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ 1. Կանդիտատները ենթարկվում են Միութեան բոլոր վորոշումներին, կատարում են Միութեան անդամի բոլոր պարտականութիւնները, իսկ ժողովներում օգտվում են խորհրդակցական ձայն տալու իրավունքով։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ 2. Երաշխավորողները պատասխանատու են իրենց երաշխավորությամբ ընդունվածների համար։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ 3. Այն ընկերների ցուցակը, վորոնք ուզում են մտնել Միութեան մեջ. պետք է կախել հիմնարկության մեջ մի աչքի ընկնող տեղից, վորոշ ժամանակով.—Վորի ընթացքում կարող են տրվել հիշած ընկերների մասին հայտարարութիւններ, և նկատողութիւններ (Отводы)։

ե. Երաշխավորողների ստուգության հետևում է ընդունելութիւնը, վորը կատարվում է Միութեան տեղական կոմիտեի կողմից։

զ. Միութեան անդամ կամ թեկնածու ընդունելու հարցը քննվում և բճիճում։ Բճիճի հաստատելուց հետո, հաստատում է ռայոնում-ռայկոմը, գավկոմում-գավկոմը։

3. Միութեան այն անդամները, վորոնք փոխադրվում են մի ռայոնից մի ուրիշ ռայոն. համարվում են փոխադրված ռայոնի կամ կազմակերպության անդամը։

4. Ռ. Կ. Ե. Մ. ծրագրի վորև է կետի խախտման դեպքում. (անկարգապահության, Միութեան անդամ լինելու անարժանիության և այլն.) Միութիւնից հեռացվում են խանգարողները։

5. Միութիւնից հեռացնելը լինելու է Միութեան ներկայացուցիչների վորոշմամբ, և ռայկոմի, գավկոմի, կամ նահանգկոմի առաջարկությամբ. հեռացվողները կարող են ինդիր տալ Միութեան բարձր օրգաններին։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ Այն բոլոր անդամները, վորոնք առանց հարգելի պատճառի երեք անգամ բացակայում են ընդհանուր ժողովներից, կամ երեք ամիս չեն վճարում անդամավճարները, առանց ներկայացուցչական ժողովի վորոշմամբ մեքենայորեն (Механически) հեռացվում են Միութեան շարքերից։

6. Հեռացված անդամների մասին իր ժամանակին հայտնվում է նահանգական կոմիտեին, վորի միջոցով հայտարարվում է մամուլում։

Բ. Ռ. Կ. Ե. Մ. Անդամների Իրավունքներն և պարտականությունները

7. Կոմունիստ-Երիտասարդ, սա մի բարձր կոչում է և ամեն մի երիտասարդ բանվորի և գիւղացու համար։

Ռ. Կ. Ե. Մ. իւրաքանչիւր անդամ, պարտավոր է իր վարքով և աշխատանքով- թե Միութեան մեջ, և թե Միութիւնից դուրս, ցույց տալ վոր ինքն արժանի է այդ կոչման, կարող է բարձր պահել, սրբությամբ

պահպանել իր կազմակերպութեան պատիվը և Կոմ-
մունիստական Կարմիր դրոշակը։

Բոլոր կոմսոմոլիստները հիշելու են, որ իրենք բանվոր դասակարգի ավանգարդ-Ռուսաստանի Կոմ-
մունիստական Կուսակցութեան ապագա անդամներն են, և պատրաստվելու են արժանավոր կերպով կատարելու կուսակցութեան անդամի այդ վսեմ ու դժվարին պարտականութիւնները։

8. Միշտ և ամեն դեպքում—Խորհրդային Իշխանութեան գործարանում, գիւղատնտեսութեան մեջ թե Կարմիր բանակում, պետական աշխատանքների ժամանակ,—կոմսոմոլիստը առաջիններից առաջինն և լինելու, ամենաընդունակը, եռանդունը և ակտիվը,-որպեսզի որինակ դառնա մնացած բոլոր երիտասարդների և աշխատողների համար։

9. Նոր հասարակարգ ստեղծելու համար Կոմերիտմիութիւնը ամեն տեղ,—որտեղ հնարավոր, Խորհրդային Իշխանութեան հետ ձեռք ձեռքի տված պայքարում է, կապիտալիստների, կալվածատերների բուրժուական ազդեցութեան, Խորհրդային Իշխանութեան օրենքների խախտողների, ժողովրդական գոյքի հափշտակողների, կաշառակերութեան, և անկարգութեան դեմ։

10. Ամեն կոմմունիստ-երիտասարդ պետք է լավ գիտենա իր Միութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը։ Պետք գիտենա Խորհրդային Իշխանութեան, բանվոր դասակարգի և Կոմմունիստական Կուսակցութեան կեանքում կատարելիք դերի մասին։ Նա գիտենալու է հանրապետութեան մեջ, և ամբողջ աշխարհում կատարվող դեպքերը ու այդ բոլորն էլ իր հերթին բացադրել,

հասկացնել մնացած երիտասարդութեան և ամբողջ աշխատավոր մասսաներին։

11. Ամեն կոմմունիստ երիտասարդ ակտիվ մասնակցում է իր Միութեան բոլոր աշխատանքներին և պայքարին։ Կանոնավոր հաճախում է նրա ժողովներին և նրա ակումբը, ձգտում է որքան կարելիս ավելի գիտութիւն ստանալ որովհետև գիտութիւնն անհրաժեշտ է Կոմմունիստական շինարարութեան համար։ Քաղաքական խնդիրների լուծման, աշխատանքի ձևակերպման, բանվոր երիտասարդութեան կրթութեան գործում, նա ակտիվ մասնակցութիւն է ցույց տալիս։

12. Վարձու աշխատող ամեն կոմմունիստ երիտասարդ պետքն անպայման անդամ լինի ի արհեստի պրոֆմիութեան։

13. Ամեն կոմմունիստ երիտասարդ պարապում է մրցումներով (спорт) և ֆիզիկական դաստիարակութեամբ։ Միշտ հիշելով, որ բանվոր դասակարգին հարկավոր են ֆիզիկապես առողջ, ուժեղ, տոկուն աշխատողներ և Կոմմունիզմի համար պայքարողներ։

14. Ամեն կոմմունիստ-երիտասարդ կրում է Կոմմունիստական Երիտասարդական Ինտերնացիոնալի նշանը. հիշելով որ ինքն էլ անդամ է բանվոր երիտասարդութեան միջազգային մեծ բանակի։

Գ. Ռ. Կ. Ե. Մ. կազմակերպութեան ձևը.

15. Ռ. Կ. Ե. Մ. հիմնվում է տերիտորեալ տվեալների համաձայն արդիւնաբերութեան կենտրոնացման վրա դեմոկրատական հիմունքներով։

Այն կազմակերպութիւնը, որը դեկավարում, ծա-

ռայում է վորև է ռայոնի, համարվում է միշտ բարձր այդ ռայոնի զանազան մասերում աշխատող կազմակերպութիւններից։ Ռ. Կ. Ե. Մ ձեռնարկող ղեկավար օրգանները իրենց գործունեութեան համար ամբողջովին պատասխանատու են իրենց ընտրող օրգաններին։

Ցածր կազմակերպութիւնները միշտ ենթարկվում են բարձր կազմակերպութիւններին։

16. Ամեն կազմակերպութեան բարձրագոյն և ղեկավար որգանը համարվում է ընդհանուր ժողովը։ Մեծ կամ արդիւնաբերական քաղաքներում-ներկայացուցիչների ժողովը, կոնֆերանսը և կամ համագումարը։

17. Կոնֆերանսները, համագումարները, ընդհանուր և կամ ներկայացուցչական ժողովները ընտրում են կոմիտե, վորը հանդիսանում է գործադիր օրգան, և ղեկավարում է տեղական կազմակերպութեան բոլոր աշխատանքները։

18. Առանձին ընույթ կրող Միութեան աշխատանքների համար առանձին շրջաններում կոմիտեները բաժանվում են համապատասխանող բաժինների-կոմիսիաների և բիւրոների (քաղաքական-լուսավորութեան, տնտեսական աշխատանքների, կազմակերպչական աշխատանքների, ազգային, և այլն)։ Կոմիսիաները և բաժինները ենթարկվում են կոմիտեին և հանդիսանում են նրա, օժանդակող օրգանները, վորոնք կատարում են կոմիտեի վորոշումները և չունեն իրենց սեփական ապարատը։

Դ. ԲՃԻՃՆԵՐԸ։

19. Այն բճիճը, վորի կազմի մեջ կան Միութեան

Երեք անդամից վոչ պակաս, հաստատվում է Դավկոմի կամ Ռայկոմի կողմից։

20. Բճիճը միութեան հիմքը կազմող օրգանն է, վորը կապ է հաստատում Միութեան և բանվոր-գիւղացիական երիտասարդական լայն մասսաների միջև։ Բճիճը կազմակերպվում է հիմնարկութեան մեջ, գործարանային դպրոցի հետ միասին, հաստատութիւններում, դպրոցներում, գիւղերում, զինվորական դպրոցներում (В. У. З.) պրոֆմիութիւններում, և առանձին ինչափահաս երիտասարդ բանվորներից։

Բճիճի նպատակները արտահայտվելու են։

ա) տրված հիմնարկութեան, գիւղին և կամ դպրոցին Ռ. Կ. Ե. Մ. հետ միացումը։

բ) Բանվոր երիտասարդութեան անգիտակից մասսաներում Ռ. Կ. Ե. Մ. ազդեցութեան տարածելն ու հիմնավորելը։

գ) Դեպի Միութեան շարքերը նոր անդամներ գրավելը։

դ) Հիմնարկութեան, դպրոցի կամ գիւղի շինարարական աշխատանքներին ակտիվ մասնակցելը։

ե) Հիմնարկութեան մեջ աշխատող բանվոր երիտասարդների տնտեսական դրութեան բարելավման համար աշխատելը։

զ) Իր անդամների շարքերում քաղաքական-լուսավորութեան աշխատանքների ձեռնարկելը։

է) Այն քաղաքական կամպանիաներին, վորոնք կը կազմակերպվեն մեր Միութեան կամ Խորհրդային Իշխանութեան կողմից ակտիվ մասնակցելը։

ը) Միութեան ղեկավար օրգաններին իրենց բոլոր աշխատանքների վարելուն մասնակցելը։

21. Աշխատանքները ղեկավարելու համար բճիճն ընտրում է բիւրո 3 հոգուց բաղկացած, և 3 ամիս ժամանակով։

22. Բճիճներն իրենց գործունեութեան համար 2 շաբաթ մի անգամից վոչ ուշ, հաշիվ են տալիս ռայկոմներին։

Ե. ՖՐԱԿՑԻԱՆԵՐԸ

23. Բանվորական ֆակուլտետներում, երեկոյան դպրոցներում, տեխնիկական կուրսերում, և ուրիշ նման հիմնարկութիւններում. եթե կան 3-ից ոչ պակաս կոմերիտասարդներ. կազմակերպում են Ռ. Կ. Ե. Մ. ֆրակցիաներ։

Ֆրակցիան ունի տրված հիմնարկութեան երիտասարդութեան մեջ քաղաքավորութեան աշխատանք վարելու խնդիրներ, հիմնավորելով այնտեղ Միութեան ազդեցութիւնը։ Նա աչքի և ընկնելու իր կարգապահութեամբ, աշխատասիրութեամբ, կլուբի աշխատանքներին ուղիղ ընթացք տալով և այլն։

24. Ռ. Կ. Ե. Մ. ֆրակցիաները դուրկ են նոր անդամներ ընդունելու նույնպես ներկայացուցիչների ժողովներում ներկայացուցիչ ունենալու իրավունքից, և այլն։

25. Ֆրակցիայի բոլոր անդամներն անպայման լինելու են վորև է բճիճի անդամ։

26. Ֆրակցիայի գործադիր օրգանը համարվում է բիւրոն, կամ նրա քարտուղարը, վորն ընտրվում է ֆրակցիայի ընդհանուր ժողովում. նա պատասխանատու է ֆրակցիայի առաջ.

Զ. Ռայոնական կազմակերպութեան մասին.

27. Բոլոր բճիճները, վորոնք գտնվում են ռայոնի շրջանում (գավկոմի կամ նահանգկոմի) ընտրելով իրենց ընդհանուր կամ ներկայացուցիչների ժողովներում կոմիտեներ, կազմում են Միութեան ռայոնական կազմակերպութիւնը։

28. Ընդհանրապես, կամ արդիւնաբերական մեծ կենտրոններում, ներկայացուցիչների ժողովը, համարվում է ռայոնի տերիտորիայի բարձրագույն և ղեկավար օրգանը։ Ընդհանուր և ներկայացուցիչների ժողովները քննում են Միութեան աշխատանքները, և այն հարցերը, վորոնք վերաբերում են ինչպես տեղական կազմակերպութեան նույնպես և ձեռնարկող բարձրագույն որգանին։ Լսում են ձեռնարկող որգանի զեկուցումները, ինչպես և Խորհրդային շինարարութեան և ընդհանուր քաղաքական հարցերին վերաբերող զեկուցումներ։ Ընտրում են կոմիտե, լսում են, հաստատում նրա և նրա կոմիսիաների հաշվետվութիւնը կազմում են աշխատանքի ծրագիրը, ղեկավարում բճիճների աշխատանքները.

29, Կոմիտեն ընտրվում է ընդհանուր, իսկ արդիւնաբերական մեծ կենտրոններում ներկայացուցիչների ժողովը. վեց ամսից վոչ ավելի ժամանակով։

Է. Նահանգային եվ գավառական կազմակերպութիւնների մասին.

30. Նահանգական կամ գավառական կոնֆերանսները գումարվում են վեց ամիսը մեկ անգամ։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. Նահանգական կոմիտեի վորոշմամբ, և կամ նահանգում գտնվող գավկոմների 1/3 մասի ցանկութեամբ, հրավիրվում է նահանգական արտակարգ կոնֆերանս։ Գավառներում—գավառի բջիջների 1/3 մասի ինդրանքով և կամ գավկոմի վորոշմամբ։

31. Նահանգական և գավառական կոնֆերանսները լսում են և հաստատում հիշած կոմիտեների ինչպես և վերահսկիչ (Ревизионная) կոմիսիաների գործունեութիւնը։ Վերընտրվում են կոմիտեներ և վերահսկիչ կոմիսիաներ։

31. Գավառական կոնֆերանսները քննադատում նահանգական կոնֆերանսների օրակարգի հարցերը, ընտրում են նահանգկոնֆերանսի համար ներկայացուցիչներ։

33. Նահանգական կոնֆերանսներում, նահանգկոմ ընտրվում է 11—15 անդամով։ Գավկոնֆերանսներն ընտրում են 7-11 մարդ. նրանք համագումարների ձեռնարկող և վարիչ օրգաններն են հանդիսանում։

34. Նահանգական կոմիտեի պարտականութիւնները են-ղեկավարել գավկոմների և տեղական կազմակերպութիւնների աշխատանքները, կիրառել կեանքում Համառուսական Համագումարի նահանգական հիմնարկութիւնների մեջ ներկայացուցիչներ ունենալու վորոշումը, և հաստատել նոր կազմված կազմակերպութիւնները։

35. Գավկոմների պարտականութիւնները են օգնել, տեղական կազմակերպութիւնների աշխատանքներին, նոր կազմակերպութիւններ ստեղծելը և հաստատելը, գոյութեան ունեցող աշխատանքներին ուղղութիւն տա-

լը-ձեռակերպելը, և գավառական հիմնարկութիւնների մեջ ներկայացուցիչներ ունենալը։

36. Կոմիտեի վորոշումները իրագործելու համար նահանգական կամ գավառական կոմիտեները ընտրում են 5 հոգուց բաղկացած մի բիւրո։

37. Նահանգական և գավառական կոմիտեների քարտուղարների համար պահանջվում է Միութեան և կուսակցութեան անդամ լինելու վորոշ ստաժ։

Նահանգական կոմիտեի քարտուղարը եթե ինտելիգենտ,-ունենալու է 3 տարվա միութիւնական և 2 տարվա կուսակցական ստաժ։ Գիւղացիների համար Միութեան և կուսակցական 2 տարվա ստաժ. բանվորի համար Միութեան 2 տարվա և կուսակցական մի տարվա ստաժ։

Գավկոմների քարտուղարների համար ինտելիգենտները-2 տարվա Միութեան և մի տարվա կուսակցական ստաժ, Բանվորների համար միութեան մեկ տարվա ստաժ, իսկ գիւղացիների համար մեկ տարվա միութեան և մեկ տարվա կուսակցական ստաժ։ Զրաւոր գիւղացիութեան շրջանից դուրս եկած քարտուղարի ստաժը այս դեպքում համապատասխանում է բանվորի ստաժին։

38. Միութեան այն կազմակերպութիւնները վորոնք ծառայում են Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. վորև և մասում, հավասարվում են շրջանային միութեան ամբողջովին և իրենց աշխատանքով ամբողջովին ենթարկվում են Ռ. Կ. Ե. Մ. կենդրոնական կոմիտեին։

39. Ազգային երիտասարդական կազմակերպութեան շրջանային կամ կենտրոնական կոմիտեն ընտրվում է շրջանային կոնֆերանսում (կամ տվեալ միութեան ազգային համագումարում)։

40. Կենտրոնական Կոմիտեի հոտուկ վորոշմամբ կազմվում են շրջանային բիւրոներ, վորոնց կազմը նշանակում է Ռ. Կ. Ե. Մ. Կենտրկոմը։ Շրջանային բիւրոները պատասխանատու են մի միայն նրա առաջ։

Բ. Միութեան կենտրոնական օրգանների մասին.

41. Ռ. Կ. Ե. Մ. ձեռնարկող և գերագոյն օրգանը համարվում է Համառուսական Համագումարը, վոր գումարում է Կենդրոնական կոմիտեն, տարին մի անգամից վոչ վաղ։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ։ Արտակարգ համագումարներ լինում են նահանգների 1/3 մասի պահանջի, և կամ Կենտրոնական Կոմիտեի վորոշմամբ։

42. Համագումարը լսում և հաստատում է Կենտրկոմի գործունեութեան հաշվետվութիւնը, հաստատում է միութեան ծրագիրը և կանոնադրութիւնը, ի նկատի է առնում շարժման ընդհանուր գիծը, վորոշում է նրա հերթական խնդիրները, ընտրում և Կենդրոնական Կոմիտե։

43. Համառուսական Համագումարի ժամանակամիջոցում, բարձրագույն օրգանը համարվում է Կենդրոնական Կոմիտեն։

44. Կենդրոնական Կոմիտեի կազմի մեջ մտնում են նրանք, վորոնց հաստատում է համագումարը։ Կենդրոնական Կոմիտեի անդամների մեկնումեկի հեռանալու դեպքում, նրա կազմը լրացվում է համագումարում ընտրված թեկնածուներով, և այն կարգով ինչպես վոր համագումարն է վորոշել։

45. Կենտրոնական Կոմիտեն վարում է միութեան բոլոր աշխատանքները, ներկայացնում է Ռ. Կ. Ե. Մ. ընդհանուր պետական հիմնարկութիւններին և հրատարակում է միութեան կենդրոնական օրգանը։

46. Կենտրոնական Կոմիտեն նախապատրաստում է Համառուսական Համագումարը, վորոշում է ներկայացուցիչների քանակը, ընդգծում է համագումարի օրակարգը։

47. Երկու ամսից վոչ ուշ, հրավիրվում է Կենտրոնական կոմիտեի պլենար ժողովը։

48. Աշխատանքի հերթական խնդիրների քննութեան և կազմակերպութիւնների միջև սերտ կապ պահպանելու համար, Կենտրոնկոմը վեց ամիսը մի անգամ գումարում է Ռ. Կ. Ե. Մ. Նահանգների ներկայացուցիչների համառուսական կոնֆերանս։

49. Ռ. Կ. Ե. Մ. Կենտրոնական կոմիտեն երեք ամիսը մի անգամ ուղարկում է նահանգական կոմիտեներին իր գործունեութեան հաշվետվութիւնը։ Նահանգական կոնֆերանսներում տալիս է ինֆորմացիոն զեկուցումներ և իր գործունեութիւնը պարզում է մամուլում։

Գ. Միութեան եւ Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան փոխհարաբերութիւնները։

50. Միութեան ղեկավարելու նպատակների համար, վոր ձեռնարկվում է կուսակցութեան կողմից Ռ. Կ. Ե. Մ. Կենդրկոմը անմիջապես ենթարկվում է Ռ. Կ. Կ. Կենդրկոմին։ Ռ. Կ. Ե. Մ. տեղական կազմակերպութիւնները աշխատում են համապատասխանող ռայո-

նի, նահանգի, կամ գաւառի կուսակցական կազմակերպութեան հսկողութեան տակ: Ռ. Կ. Կ. հետ կապ հաստատելու համար Ռ. Կ. Ե. Մ. օրգանները ուղարկում են կոմկուսի համապատասխան օրգաններում ներկայացուցիչներ:

Ժ. Միութեան և պետական կազմակերպութիւնների փոխհարաբերութիւնները:

51. Կոնտակտի, և կապ հաստատելու համար Միութիւնը ուղարկում է իր ներկայացուցիչները Աշխատանքի Պաշտպանման, Ժողովրդական Լուսավորութեան բաժիններում, պրոֆմիութիւնների մէջ, և առհասարակ այն հիմնարկութիւններում, վորոնց աշխատանքները շօշափում են բանվոր երիտասարդութեան շահերը:

52. Խորհրդային հիմնարկութիւնների մէջ ուղարկված ներկայացուցիչները միշտ, պարբերաբար իրենց գործունէութեան մասին զեկուցում են տալիս ուղարկող կազմակերպութիւններին:

ԺԱ. Դրամական միջոցները

53. Դրամական միջոցները հանդիսանում են անդամավճարները, սուբսիդիաները և նման եկամուտները:

54. Անդամավճարները պարտադիր են. Նրանց քանակը հավասարվում է աշխատավարձի 1/2 տոկոսին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 1. Տոկոսային սիստեմի անիրագործելի դառնալու դեպքում, անդամավճարների քանակը վորոշում է գավկոմը, վորը հաստատում է [illegible] կոմիտեն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 2. Անգործները և կարմիր բանակայինները անդամավճարներից ազատվում են:

Անվան
Публичная Библиотека

35

Ռ. Կ. Ե. Մ. Անդրկովկասի երկրային կոմիտեի հրատարակութեամբ հայերեն լեզվով լույս են տեսել.

1. Մի՛ցին—Կրակենք, ոմբակոծենք աստծուն.
2. Բարատով—Մեր կարմիր բանակը.
3. Ռ. Կ. Ե. Մ. Կանոնադրութիւնը.

Տպագրվում են՝

4. Կարմիր սատանի ճուտերը-Բլեախինի
5. Ռ. Կ. Ե. Մ. Ծրագիրը.

2013
<< Ազգային գրադարան
3354
NL0036875